ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Հակառակ աշխատանքային ընկերներին ուղղած ակադեմիկոսի հորդորներին՝ ոչ մի կերպ չանդրադառնալ իր տարեդարձին, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում հուլիսի 10-ին այդ առիթով տեղի ունեցավ մի համեստ հանդիսություն: Միջոցառումը մեծարման կամ գնահատանքի արարողություն չէր: Դա տասնյակ տարիներ գիտական համատեղ ուղի անցած ընկերների հավաք էր, որոնցից ոմանք վաղուց արդեն ազգային ակադեմիայի աշխատակից չեն կամ արդեն Երևանում չեն բնակվում: Հավաքվեցին ու ակադեմիկոսի ծննդյան օրը դարձրին գիտության ու հասարակական զարգացման հրատապ խնդիրների քննարկման օր: Մտքերի փոխանակությունն ու քննարկումները զեկուցումների ձևաչափով չէին ներկայացվում: Դրանք ամենաբարդ հարցերի շուրջ իմաստասեր հին ընկերների անկաշկանդ ինքնարտահայտման բնույթ ունեին, որ համեմվում էին անցած տարիներին վերաբերող պատմություններով ու պատումներով: Իսկ ո՞վ է ասել, թե գիտաժողովները անպայման պետք է տեղի ունենան ընդունված՝ ավանդական ձևով, հաշված-կշռված օրակարգով ու խստագույնս պահպանվող ընթացակարգով: Ավանդական ձևաչափից դուրս կայացած այդ գիտական հավաքի ժամանակ արտահայտվեցին գուցեն շատ ավելի մտքեր ու գաղափարներ, քան կարելի էր անել բոլորիս ծանոթ կաղապարում դրված գիտաժողովի կամ սեմինարի դեպքում: Իսկ վերլուծելու համար հասունացած հարցերը, որոնք կարող են իմաստասիրական ցանկացած գիտաժողովի օրակարգ ձևավորել, քիչ չէին և դրանց մի զգալի մասն անմիջապես առնչվում էր ակադեմիկոս Համլետ Գևորգյանի կատարած հետազոտություններին, առաջադրած գիտական գաղափարներին:

Դրանց նշանակությունը, ըստ ամենայնի, հասկանալու համար կարևոր է իմանալ, թե ինչպիսին էր հոգևոր ու գիտական միջավայրն ավարտված դարի կեսերին, երբ իմաստասիրության անդաստան մտավ Հ. Գևորգյանը: Մեփական պատմություն ու ավանդույթներ ունեցող հայ փիլիսոփայական միտքը հայտնվել էր մարքսիզմ-լենինիզմի պարտադրած կաղապարներում և կուսակցական վերահսկողության ու գրաքննության տակ: Կանխապես հայտնի էին թե՛ թույլատրելի հարցադրումները, թե՛ դրանց սկզբունքային լուծումներն ու պատասխանները: Որևէ մեկը չէր կարող դուրս գալ մարքսիզմ-լենինիզմի կողմից տրամադրվող գաղափարական դաշտից: Ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքի հնարավորությունները հասցված էին նվազագույնի: 1947-ին ՀԽՍՀ ԳԱ նախագահությանը կից ստեղծված փիլիսոփայության սեկտորի գիտաշխատողները հայտնվել էին ահա այդպիսի ոչ հեշտ իրավիճակում: Նրանց գիտական վարքի մասին այսօր կարող ենք դատել այն տպագրված աշխատանքներով, որոնք լույս են տեսել այդ տարիներին: 2010 թ. հրատարակված «ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը 40 տարեկան» գրքույկի մատենագիտա-

կան բաժինը հնարավորություն է տալիս արդեն XXI դարի հեռվից գնահատել հայ իմաստասերների կեցվածքը, նրանց գիտական ու քաղաքացիական դիրքորոշումները: Վստահաբար կարելի է ասել, որ հայ իմաստասերները ամեն կերպ աշխատել են խուսափել մարքս-լենինյան փիլիսոփայության գաղափարական բռնությունից, փորձել են շրջանցել այն սահմանափակումները, որոնք իջեցվում էին «կուսակցական վերևներից»: Այդպիսի հնարքներից մեկը հայ փիլիսոփայության պատմության հարցերի քննությունն էր: Անցած դարի կեսերի հրատարակությունների ցանկը մեզ «հուշում է», որ հայ մարքսիզմ-լենինիզմի մենաշնորհը հաղթահարելու ուղիներից մեկը փիլիսոփայության պատմության հարցերին անդրադառնալն էր, ավանդույթ, որ սկսվեց երջանկահիշատակ Վազգեն Կարապետի Չալոյանի աշխատություններով: Սակայն անհնար էր պարփակվել փիլիսոփայության պատմության «ապաստանում»: Պահանջվում էր անաղմուկ ընդդիմության այդ գիծն առաջ տանել նաև փիլիսոփայական ուսումնասիրությունների մյուս ոլորտներում: Անկասկած, միամտություն կլիներ պնդել, թե անխտիր բոլոր մենագրություններում հայ իմաստասերները լուռ համաձայնությամբ որդեգրել էին կուսակցական գրաքննությունը շրջանցելու հնարքներ: Բայց փաստ է նաև, որ հայ իմաստասիրական միտքն արդեն իսկ դարակեսին հայտնագործել էր այն արահետը, որը մեր փիլիսոփայական միտքը զերծ էր պահում մարքսիզմ-լենինիզմի կույր պաշտամունքից: Իմացաբանության, մեթոդաբանության և բնագիտության փիլիսոփայական հարցերի բնագավառում այդ արահետը գտել էր այն ժամանակ երիտասարդ իմաստասեր Համլետ Ամբակումի Գևորգյանը:

Նորից դառնանք հրատարակություններին: 1957 թ. լույս տեսան Հ. Գևորգյանի երեք աշխատությունները: Խոսուն էին դրանց վերտառությունները՝ «Ինչ է գիտական կանխատեսումը», «Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ» և « О роли абстракции в познании «): Արդեն իսկ ուսումնասիրության թեմաները վկայում էին, որ որդեգրված է հետազոտական ուրույն ուղի, որը կողմնորոշված է դեպի գիտական իմացության իմաստասիրական խորքերի բացահայտումը: Ինքը՝ թեմատիկան, թույլ էր տալիս չդիմել լենինիզմին ու կուսակցությանը նվիրված ներբողներին և հարցերը քննել «գիտության նյութի» շրջանակներում: Արդեն 60-ականներին որպես հետազոտական խմբի ղեկավար՝ Հ. Գևորգյանն ուղղորդում էր ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի սեկտորում իմացաբանության և մեթոդաբանության ասպարեզում տարվող ուսումնասիրությունները: Այդ տարիներին հենց նրա շնորհիվ ՀԽՍՀ - ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորում ներդրվեցին հետազոտության սկզբունքներ ու մոտեցումներ, որոնք խմբի աշխատանքը զերծ պահեցին հասարակագիտության և առանձնապես փիլիսոփայության մեջ արմատավորված կեղծ գիտականության խորհրդային չափանիշներից: Այդ մոտեցումները հետագայում բնութագրեցին նաև այն դասընթացների ընդհանուր ուղղվածությունը, որոնք ընթերցվում էին ակադեմիայի փիլիսոփայության ամբիոնում համակարգի ասպիրանտների համար:

1965-ին լույս տեսավ Հ. Գևորգյանի «Հավանական և հավաստի գիտելիք» («Вероятное и достоверное знание «) հիմնարար աշխատությունը, որում մշակվեցին գիտության փիլիսոփայության մի շարք հրատապ հարցեր, շրջանառության մեջ դրվեցին դրանց ինքնատիպ լուծումներ: Տրամաբանական-մեթոդաբանական հետազոտությունների՝ Հ. Գևորգյանի առաջադրած այն ծրագիրը, որը 60–70-ականներին դրվել էր Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի՝ իր գլխավորած՝ պրոբլեմային խմբի աշխատանքի հիմքում, արտակարգ արգասաբեր եղավ թե գիտության փիլիսոփայության ու մեթոդաբանության մեջ նոր արդյունքներ ձեռք բերելու, թե՛ նոր կադրեր պատրաստելու և թե՛ խորհրդային տարածքում հայ իմացաբանների ու

մեթոդաբանների՝ երևանյան դպրոցի ճանաչման համար: Ծրագիրը հակադրվում էր գիտական գիտելիքների տրամաբանական վերլուծության հնարավորությունների բացարձակացման՝ այդ տարիներին լայն տարածում ստացած մտայնությանը և նրանց իրավունքներում վերականգնում գիտելիքի իմացաբանական վերլուծության մեթոդները՝ հետազոտական դաշտ բերելով գիտական գիտելիքների և հատկապես գիտական տեսության չձևայնացվող տեսանկյուններն ու շերտերը: Այդ տեսակետը զարգացնող՝ «Գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցերը» կոլեկտիվ աշխատությունների երկու պրակը (1969, 1971) հիմք դարձան 1972-ին Երևանում համամիութենական փիլիսոփայական սիմպոզիումներ կազմակերպելու համար, որի աշխատանքին մասնակցեցին այդ բնագավառի՝ երկրում հայտնի բոլոր առաջատար մասնագետները (սիմպոզիումի աշխատանքները 1974-ին ամփոփվեցին նշված շարքի երրորդ պրակում): Հետազոտական նույն ծրագրի հունով ընթացավ 1977-ին Երևանում «Փիլիսոփայությունը և գիտության մեթոդաբանական հարցերը» թեմայով կայացած անդրկովկասյան խորհրդաժողովը:

80-ական թվականներին գիտության փիլիսոփայության ու մեթոդաբանության երևանյան դպրոցի հիմնարար գաղափարների ծավալման ու զարգացման հունում Հ. Գևորգյանը ձեռնարկեց գիտելիքի զարգացման վրա պատմամշակութային գործոնների ազդեցության փիլիսոփայական իմաստավորման գործը: Գիտության՝ որպես մշակութային երևույթի, նման դիտարկումը հնարավորություն տվեց նորովի իմաստավորել եվրոպական մտավոր միջավայրից եկող գիտական ռացիոնալիզմի շրջանակները, մշակույթի միասնության հիմնարար գաղափարի համատեքստում բացահայտել գիտության հումանիստական ներուժը: Տեսական փիլիսոփայության խնդրակարգում մշակված այդ մոտեցումները Հ. Գևորգյանը 90-ական թվականներին բերեց դեպի հայ մշակույթի փիլիսոփայական վերլուծության ու գնահատման հիմնահարցեր: Այդ տարիներին գրված « Национальная культура с точки зрения истории философии « (1991), «Հայ փիլիսոփայության պատմության մշակութաբանական տեսանկյունները» (1993), «Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ» (1997), «Ազգային մշակույթը պատմության փիլիսոփայության տեսանկյունից» (1999), «Հայ ժողովրդի պատմությունը և մշակույթը Առնոլդ Թոյնբիի պատմության փիլիսոփայության լույսի տակ» (2002), «Մշակույթների հանդիպումը. պրոբլեմներ և լուծումներ» (2004) և մի շարք այլ աշխատություններում մշակույթի փիլիսոփայության հանգուցային հարցերն ու դրանց նորովի մեկնաբանություններն անհատականացվեցին հայոց մշակույթի և պատմության նկատմամբ: Մշակույթի դիախրոնիկ ամբողջականություն, մշակույթի զարգացման և արդիականության չափանիշներ, մշակութային ժառանգորդում, մշակութային ունիվերսալներ. ահա մի քանիսը մշակույթի տեսության ու փիլիսոփայության այն հիմնարար կատեգորիաներից, որոնք վերաիմաստավորվեցին մեր ազգային մշակույթի բացառիկ հարուստ նյութի միջոցով:

Վերջին շուրջ 60 տարվա ընթացքում հայ փիլիսոփայության անդաստանում չի առաջադրվել որևէ հիմնարար ծրագիր կամ գաղափար, որի մեջ իր մասը չունենա Հ. Գևորգյանը: «Հայկական Սովետական Հանրագիտարանի» շուրջ հարյուր հիմնարար հոդված հեղինակել է ինքը, միջին սերնդի մեթոդաբանների մեծ մասն աշակերտել են նրան:

85 տարի… Իմաստասերի համար դա հիրավի հասունության, վաստակի վայելման ու ամփոփումների տարիք պետք է լիներ: Բայց դա չի վերաբերում Հ. Գևորգյանին: Արդեն նոր հարյուրամյակում՝ մտահոգ նոր սերնդի հումանիտար կրթության ու դաստիարակության խնդիրներով՝ նա միջնակարգ դպրոցի համար հեղինակեց «Հասարակագիտություն» առարկայի ծրագիր (2003), պատմության փիլիսոփայության տեսակետից անդրադարձավ Հայաստանում

քրիստոնեության ընդունմանը, եկեղեցու՝ որպես հասարակական հաստատության՝ ազգային կյանքում ունեցած դերին, հրատարակեց «Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ» (2005) և "Философия. Наука. Культура" (2010) հիմնարար աշխատությունները, գլխավորեց փիլիսոփայության, սոցիոլոգիայի ու քաղաքագիտության գծով ԲՈՀ-ի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը և այլն:

Երբ հայ փիլիսոփայության ապագա ուսումնասիրողներն անդրադառնան հայոց փիլիսոփայության մեր ժամանակների պատմությանը, անկասկած, անդրադառնալու են հայ իմաստասիրության մեջ Հ. Գևորգյանի ներդրմանը: Իր ժամանակակիցների համար, սակայն, նրա կերպարը չի հանգում միայն գիտական այն արդյունքներին, որոնց նա հասել է: Գիտնականի հետ աշխատանքային ամենօրյա կապերի ու մարդկային հարաբերությունների մեջ գտնվող նրա աշակերտների ու գործընկերների համար նրա անունը գուցեև ամենից առաջ կապվում է այն միջավայրի հետ, որտեղ գիտական պահանջկոտությունը համատեղվում է հոգատարության, մտքի ազատությունը՝ քաղաքացիական պատասխանատվության և հանդուրժողականությունը՝ գիտական սկզբունքայնության հետ: Այդ միջավայրը ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում արդեն կես դար ձևավորում է այսօրվա հոբելյարը՝ ակադեմիկոս, իմաստասեր Համլետ Գևորգյանը:

ՄԱՆԱՍՅԱՆ Ա. Ս.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ